ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2016 թվականի **թիվ 4** քաղ. Աստանա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից։

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի 2016 թվականի
մայիսի 31–ի թիվ 4 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

որոնք կատարվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում

1. 133–րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12-րդ եւ 13-րդ ենթակետերով՝

«12) միջոցներ կիրառելու մասին որոշումների նախագծերը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 50–րդ հոդվածին համապատասխան,

13) «Ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու մասին որոշումների նախագծերը։»։

2. 142–րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 21-րդ եւ 22-րդ ենթակետերով՝

«21) միջոցներ կիրառելու մասին որոշումների նախագծերը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 50–րդ հոդվածին համապատասխան,

22) «Ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու մասին որոշումների նախագծերը։»։

3. Նշված կանոնակարգի թիվ 1 հավելվածում՝

17-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«17. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 50–րդ հոդվածին համապատասխան՝ միջոցների կիրառման մասին եւ դրանց կիրառման կարգի մասին որոշումներ կայացնելը (բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29–ի համաձայնագրի 2.10 եւ 3.4 հոդվածներով նախատեսված միջոցների կիրառման մասին որոշումների կայացման՝ հաշվի առնելով սույն հավելվածի 17[1] կետը)։».

լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17[1] կետ՝

«17[1]. Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության հետ փոխհատուցում տրամադրելու մասին պայմանավորվածություններ ձեռք չբերելու կամ Կոլեգիայի կողմից նշված միջոցների կիրառման մասին որոշումներ չկայացնելու դեպքում «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29–ի համաձայնագրի 3.4 հոդվածով նախատեսված միջոցների կիրառման մասին որոշումներ կայացնելը, ինչպես նաեւ նշված միջոցները երկարաձգելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումներ կայացնելը, եթե դրանց կիրառման մասին որոշումները կայացվել են Խորհրդի կողմից՝ սույն կետին համապատասխան։».

լրացնել հետեւյալ բովանդակությամբ 133-րդ եւ 134-րդ կետեր՝

«133. «Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու մասին որոշումներ կայացնելը, ինչպես նաեւ նշված միջոցը կիրառելու կարգը հաստատելը։

134. «Ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրին համապատասխան՝ Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվության կազմի, անդամ պետությունների կողմից այդ տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացնելու կարգի հաստատումը։»։